ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿ

✉ԱՀ, ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ

**ՀԱՐԳԵԼԻ տնօրինություն և ուսուցչա-մանկավարժական կազմ**

Ձեր շրջանավարտ՝ շարքային Վարդան Վլադիկի Վարդանյանը, ծառայում է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի 46492 զորամասում:

Շարքային Վ. Վ. Վարդանյանը բարեխղճորեն է կատարում իր սահմանադրական պարտքը Հայրենիքի հանդեպ, կարճ ժամանակամիջոցում ամբողջությամբ յուրացրել է երիտասարդ մարտիկի ծրագրով նախատեսված մասնագիտական նյութը, դարձել ուժեղ առաջատար և կարգապահ մարտիկ:

Լինելով զինվորական կոլեկտիվի լավագույն և ակտիվ անդամներից մեկը՝ վայելում է արժանի հեղինակություն, օրինակ է ծառայում իր համածառայակիցների համար, կրտսեր հրամանատարներին օգնում է ստորաբաժանումում կանոնադրական կարգուկանոն հաստատելու գործում: Անկասկած, Վ. Վ. Վարդանյանի Հայրենիքի արժանի զինվորի՝ դաստիարակության գործում Ձեր ունեցած ներդրումն անփոխարինելի է:

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ Հայրենիքի անձնվեր պաշտպանի դաստիարակման համար:

Ցանկանում ենք Ձեզ քաջ առողջություն, անձնային հաջողություններ, արցախյան կուռ կամք, երկարակեցություն և բազում տարիներ արդյունավոր մանկավարժական գործունեություն:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ՊԲ 46492 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

գնդապետ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՀԱՎԱՔ ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

մայոր Կ.ՍԵՐԳՈՅԱՆ